



EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի
Նախադեպային իրավունքի որոնումը և ըմբռնումը

Նախադեպային իրավունքի տեղեկատվական և հրատարակչական
բաժին
Իրավախորհրդատվական վարչություն

Վերջին թարմացումը՝ 2015 թվականի դեկտեմբեր

Բովանդակություն

1. Ներածություն	3
2. HUDOC տվյալների բազա	4
3. Վճիռների և որոշումների ժողովածուներ (պաշտոնական շարք)	6
4. Դատարանի վերջին նախադեպային իրավունքի ակնարկ	7
5. Նախադեպային իրավունքի տեղեկագիր	7
6. Ընդունելիության ուղեցույց	8
7. Նախադեպային իրավունքի ուղեցույցներ	9
8. Նախադեպային իրավունքի հետազոտական հաշվետվություններ	9
9. Եվրոպական իրավունքի ձեռնարկներ	10
9.1. Խտրականության արգելքի մասին եվրոպական իրավունքի ձեռնարկ	10
9.2. Ապաստանին, սահմաններին և ներգաղթին վերաբերող եվրոպական իրավունքի մասին ձեռնարկ	10
9.3. Տվյալների պաշտպանության եվրոպական իրավունքի մասին ձեռնարկ	10
9.4. Երեխայի իրավունքների վերաբերյալ Եվրոպական իրավունքի ձեռնարկ	11
10. COURTalks-disCOURS	11
11. Տեղեկատվական թերթիկներ	11
12. Երկրի պրոֆիլ	12
13. Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների և օրենքի գերակայության գլխավոր տնօրինության հրապարակումները	13
13.1. Մարդու իրավունքների ձեռնարկներ	13
14. Առաջարկներ առկա նյութերից արդյունավետ օգտվելու մասին	14
14.1. Փնտրեք կոնկրետ գործը	14
14.2. Փնտրեք գործերը ըստ հոդվածի, հիմնաբառի կամ թեմայի	14
14.3. Իմացիր ամսեկան քննված ամենակարևոր գործերի մասին	14
14.4. Իմացիր տարեկան քննված ամենակարևոր գործերի մասին	14
14.5. Իմացիր ընդունելիության չափանիշները	14

1. Ներածություն

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը ներառում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի և դրա Արձանագրությունների դրույթների կիրառումից բխող թեմաների լայն շրջանակ:

Դատարանի նախադեպային իրավունքի և պաշտոնական տեքստերի ըմբռնմանը նպաստելու նպատակով դատարանի քարտուղարությունը հրատարակում է բազմաթիվ նյութեր:

Սույն ուղեցույցը տեղեկություններ է տրամադրում Դատարանի նախադեպային իրավունքի տվյալների բազայի և բազմաբնույթ հրատարակությունների մասին, որոնք առկա են Դատարանի կայքէջում:

Ուղեցույցի վերջում բերված են առաջարկներ հետազոտական առկա նյութերից լավագույնս օգտվելու մասին:

2. HUDOC տվյալների բազա

<http://hudoc.echr.coe.int/sites/eng>



HUDOC տվյալների բազան մատչելի է դարձնում՝

- Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Մեծ պալատի, Պալատի և Կոմիտեի վճիռներ, որոշումներ, հաղորդակցված գործեր, խորհրդատվական կարծիքներ, իրավական ամփոփագրեր և մամուլի հաղորդագրություններ
- Նախկինում գործող Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովի որոշումներ և հաշվետվություններ
- Նախարարների կոմիտեի բանաձևեր

Հատկությունները՝

- Անգլերեն, ֆրանսերեն, թուրքերեն և ռուսերեն միջերես
- Որոնման գոտիներ
- Խորացված որոնման հնարավորություն
- Հիմնաբառերով հնարավոր է գտնել նմանատիպ իրավական բովանդակությամբ փաստաթղթերի խումբ
- Հոդվածներին և հիմնաբառերին առնչվող եզրակացություններ¹
- Անսահմանափակ արդյունքներ, դրանք հիշելու և տպելու հնարավորություն
- Արդյունքները հղում են գործի իրավական ամփոփագրին, եթե ընտրված է Նախադեպյաին իրավունքի տեղեկագիր բաժինը
- Վճիռների և որոշումների ոչ պաշտոնական լեզուներով թարգմանություն

Հիմնաբառերի ցանկ՝ www.echr.coe.int/Documents/HUDOC_Keywords_ENG.pdf

¹Կոնվենցիայի 6-րդ հոդվածի § 1 համաձայն երկու բացահայտում ներառող գործով եզրակացությունների օրինակ՝

6-րդ հոդվածի խախտում՝ արդար դատավարության իրավունք (6-րդ հոդված՝ հարկադիր կատարման վարույթ, հոդված 6-1՝ դատավարության հասանելիություն)

Մարդու իրավունքների եվրոպական
դատարանի նախադեպային իրավունքի
բացահայտումը և ըմբռնումը

*Նախադեպային իրավունքի տեղեկատվական և հրատարակչական
բաժին
Իրավախորհրդատվական վարչություն*

և www.echr.coe.int Նախադեպային իրավունք → HUDOC → [HUDOC](#)
օգնություն բաժիններում

Օգտագործողի ձեռնարկներ և ուսուցողական նյութեր՝ www.echr.coe.int Նախադեպային
իրավունք → HUDOC → [HUDOC](#) օգնություն բաժնում

[HUDOC վճիռների և որոշումների RSS թարմացումները](#) առկա են RSS պատկերակում՝
www.echr.coe.int կայքէջի ստորին հատվածում

3. Վճիռների և որոշումների ժողովածուներ (պաշտոնական շարք)

Առկա են www.echr.coe.int կայքէջում՝ Նախադեպային իրավունք → Վճիռների և որոշումների հաշվետվություններ /փոխել՝ ժողովածու/ և է-հաշվետվություններ /փոխել՝ ժողովածու/ բաժիններում



- Իրավախորհրդատուի կողմից ներկայացված առաջարկի հիման վրա՝ Բյուրոյի կողմից ընդունված ամենակարևոր վճիռների և² որոշումների պաշտոնական ընտրանի³ (մոտավորապես տարեկան՝ 30 գործ)
 - Վճիռներ և որոշումներ, որոնք նշանակալի ներդրում են ունեցել նախադեպային իրավունքի զարգացման, պարզաբանման և փոփոխության համար
 - Ամբողջական տեքստով կամ հատվածներով հրատարակված գործեր՝ դասակարգված ըստ հոդվածի, հիմնաբառի և հիմնական հասկացությունների, որոնց նախորդում են ներածական մասը և ամփոփագիրը
 - Տարեկան ինդեքս
- Անգլերեն և ֆրանսերեն լեզուներով երկլեզու հրատարակություն (2016 թվականից հասանելի կլինի միալեզու տարբերակը)
 - Էլեկտրոնային հաշվետվությունները կարելի է ներբեռնել PDF տարբերակով
 - Տպագրված տարբերակը հրատարակված է Wolf Legal Publishers հրատարակչության կողմից <http://rjd.wolfpublishers.com/>

² Դատարանում գործում է Բյուրո՝ Դատարանի նախագահի, Դատարանի փոխնախագահների և բաժինների նախագահների կազմով (Դատարանի կանոնակարգի 9Ա կանոն):

³ Դատարանի նախադեպային իրավունքի որակը և հետևողականությունն ապահովելու համար Դատարանին օգնում է Իրավախորհրդատուն: Նա Քարտուղարության անդամ է: Իրավախորհրդատուն տրամադրում է կարծիքներ և տեղեկություններ՝ մասնավորապես դատական կազմերին և Դատարանի անդամներին (Դատարանի կանոնակարգի 18Բ կանոն):

4. Դատարանի վերջին նախադեպային իրավունքի ակնարկ

Առկա է www.echr.coe.int կայքէջում՝ Նախադեպային իրավունք → Դատարանի նախադեպային իրավունքի վերջին գործերի ակնարկ բաժնում

- Դատարանի տարեկան հաշվետվության մեջ Իրավախորհրդատուի բաժինը ընդգծում է այն վճիռները և որոշումները, որոնցում բարձրացվում են նոր հարցեր կամ ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող կարևոր խնդիրներ, սահմանվում են նոր սկզբունքներ, կամ մշակվում կամ պարզաբանվում է Դատարանի նախադեպային իրավունքը
- Տարեկան հաշվետվությունն ամբողջությամբ հասանելի է՝ www.echr.coe.int կայքէջում Հրատարակումներ → Տարեկան հաշվետվություն բաժնում

5. Նախադեպային իրավունքի տեղեկագիր

Առկա է PDF տարբերակով www.echr.coe.int կայքէջից, համացանցային տնեջից (Արագ հղումներ) և [Նախադեպային իրավունք](#) և [Հրատարակություններ](#) բաժիններում



- Գործերի ամփոփագրերը համարվում են հատուկ կարևորության բաժիններ՝ վճիռներ, ընդունելիության վերաբերյալ որոշումներ, հաղորդակցված գործեր և Մեծ պալատում անավարտ գործեր. փաստերի և իրավունքի հակիրճ ներկայացում՝ Դատարանի պատճառաբանության շեշտադրմամբ
 - Ներառում է տեղեկություններ Դատարանի վերջին զարգացումների և հրապարակումների մասին, ինչպես նաև միջազգային այլ ասոցիացիաների ընտրված որոշումների ամփոփագրեր
 - Գործերը դասակարգված են ըստ հոդվածի և հիմնաբառերի
 - Նկարագրական ներածական նշումներ
- Ամսական հրատարակություն
 - Տարեկան ինդեքսը թարմացվում է ամեն ամիս
 - Անգլերեն և ֆրանսերեն լեզուներով երկլեզու բովանդակություն

- 2013 թվականից հասանելի է նաև թուրքերենով
- Օգտագործողները, որոնք ցանկանում են **անհատական ամփոփագրեր** փնտրել **Տեղեկագրերից`** 1988 թվականից մինչև հիմա, կարող են դա անել` ընտրելով **«Իրավական ամփոփագրեր»** տուփը HUDOC տվյալների բազայի Փաստաթղթերի բաժնից <http://hudoc.echr.coe.int/sites/> և օգտագործելով ընտրանքի բոլոր չափանիշները և գոտիները, կամ սեղմելով **«Իրավական ամփոփագրեր»** հղումը` արդյունքների ցանկում:

Դուք կարող եք բաժանորդագրվել [Նախադեպային իրավունքի տեղեկագրի RSS ժապավենին](#)` իմանալու համար, թե երբ է հրապարակվելու հաջորդ Տեղեկագիրը: Ուսուցողական [ուղեցույցը](#) Ձեզ կօգնի բաժանորդագրվել թարմացումներին:

Դուք կարող եք **բաժանորդագրվել թղթային տարբերակով** տասնմեկ տեղեկագրերի` գումարած տարեկան ինդեքսը` 30 եվրո կամ 45 եվրո գումարով:

6. Ընդունելիության ուղեցույց

Հասանելի է www.echr.coe.int կայքէջում` Նախադեպային իրավունք → [Ընդունելիության ուղեցույց](#) բաժնում

- Նկարագրում է ընդունելիության պայմանները, որոնց պետք է բավարարի գանգատը, ինչպես օրինակ`
 - ✓ Անհատական գանգատ (34-րդ հոդված)
 - ✓ Վեց ամսյա ժամկետային սահմանափակում (35-րդ հոդված, § 1)
 - ✓ Ներպետական իրավական պաշտպանության միջոցների սպառում (35-րդ հոդված, § 1), ...
- Տպագրված անգլերենով և ֆրանսերենով և թարգմանված ավելի քան քսան ոչ պաշտոնական լեզուներով:
- Տպագրված տարբերակը անգլերեն և ֆրանսերեն լեզուներով հրատարակված է Wolf Legal Publishers հրատարակչության կողմից` www.wolfpublishers.com

7. Նախադեպային իրավունքի ուղեցույցներ

Առկա է www.echr.coe.int կայքէջում՝ Նախադեպային իրավունք → [Նախադեպային իրավունքի ուղեցույց բաժնում](#)

- Ըստ հոդվածի՝
 - ✓ 4-րդ հոդվածի ուղեցույց՝ Ստրկության և հարկադիր աշխատանքի արգելում
 - ✓ 5-րդ հոդվածի ուղեցույց՝ Ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք
 - ✓ 6-րդ հոդվածի ուղեցույց՝ Արդար դատաքննության իրավունք (քաղաքացիական) և (քրեական)
 - ✓ 9-րդ հոդվածի ուղեցույց՝ Մտքի, խղճի և կրոնի ազատություն
- Առկա է անգլերենով, ֆրանսերենով և տարբեր ոչ պաշտոնական լեզուներով

8. Նախադեպային իրավունքի հետազոտական հաշվետվություններ

Հասանելի է www.echr.coe.int կայքէջում՝ Նախադեպային իրավունք → [Նախադեպային իրավունքի հետազոտական հաշվետվություններ](#) բաժնում

- Վերաբերում է որոշակի փոխկապակցված թեմաների, Կոնվենցիայի կոնկրետ դրույթների և Դատարանի նախադեպային իրավունքում այլ միջազգային գործիքների կիրառմանը:
 - ✓ Բիռնթիկան և Դատարանի նախադեպային իրավունքը
 - ✓ Դատարանի նախադեպային իրավունքը երիտասարդների վերաբերյալ
 - ✓ Բռնություն երեխայի նկատմամբ
 - ✓ Մշակութային իրավունքներ
 - ✓ ՄԻԵԿ նախադեպային իրավունքում առողջությանը վերաբերող խնդիրները
 - ✓ Համացանց
 - ✓ Ազգային անվտանգությունը և եվրոպական նախադեպային իրավունքը
 - ✓ Ընդունելիության նոր չափանիշը
 - ✓ 10-րդ հոդվածի համաձայն դրական պարտավորությունները
 - ✓ Հղումներ Մարդու իրավունքների միջամերիկյան դատարանին՝ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում
 - ✓ Դատախազի դերը
 - ✓ Եվրոպայի խորհրդի պայմանագրերի կիրառումը Դատարանի նախադեպային իրավունքում,...
- Առկա է անգլերենով, ֆրանսերենով և տարբեր ոչ պաշտոնական լեզուներով

9. Եվրոպական իրավունքի ձեռնարկներ

Առկա է www.echr.coe.int կայքէջում՝ Հրատարակություններ → ՄԻԵԴ-ի և ՀԻԳ-ի կողմից
համատեղ հրատարակություններ

- Հրատարակված Դատարանի, Եվրոպական միության՝ Հիմնարար իրավունքների
գրասենյակի (ՀԻԳ) և Եվրոպայի խորհրդի կողմից համատեղ
- Առկա է շատ լեզուներով

9.1. Խտրականության արգելքի մասին եվրոպական իրավունքի ձեռնարկ

- Խտրականության արգելքի մասին եվրոպական իրավունքի առաջին
համապարփակ ուղեցույց: Այն զարգացնում է եվրոպական համապատասխան
նախադեպային իրավունքը և ներառում է խտրականության տեսակներին և
դրանից պաշտպանվելուն առնչվող իրավիճակներ և ընդհանուր տեղեկություններ,
իրավունքի շրջանակները (այդ թվում՝ թե ով է պաշտպանված) և
պաշտպանության ենթակա հիմքերը, ինչպես օրինակ՝ սեռը, հաշմանդամությունը,
տարիքը, ռասան և ազգությունը

9.2. Ապաստանին, սահմաններին և ներգաղթին վերաբերող եվրոպական իրավունքի մասին ձեռնարկ

- Ապաստանին, սահմաններին և ներգաղթին վերաբերող եվրոպական իրավունքի
առաջին համապարփակ ուղեցույցը: Այն կենտրոնանում է Եվրոպայում՝ երրորդ
երկրների քաղաքացիների հետ իրավիճակներ ներառող իրավական հարցերի վրա
և ընդգրկում է թեմաների լայն շրջանակ, այդ թվում՝ ապաստանի
ընթացակարգերի մատչելիությունը, հարկադիր վերադարձը, կալանավորումը և
տեղաշարժի ազատության սահմանափակումները

9.3. Տվյալների պաշտպանության եվրոպական իրավունքի մասին ձեռնարկ

- Տվյալների պաշտպանության եվրոպական իրավունքի առաջին համապարփակ
ուղեցույց, որը նախատեսված է տվյալների պաշտպանության բնագավառում
մասնագիտացում չունեցող գործող փաստաբաններին ծանոթացնել իրավունքի
այս ոլորտին:

9.4. Երեխայի իրավունքների վերաբերյալ Եվրոպական իրավունքի ձեռնարկ

- Երեխայի իրավունքների վերաբերյալ Եվրոպական իրավունքի առաջին համապարփակ ուղեցույցը: Այն հղման մեկնակետ է թե Եվրոպայի խորհրդի և թե Եվրոպական միության՝ Եվրոպայում երեխաների իրավունքների պաշտպանության և խթանման վերաբերող իրավունքի մասին:

10. COURTtalks-disCOURS

Հասանելի է է www.echr.coe.int կայքէջում՝ Նախադեպային իրավունք → COURTtalks-disCOURS բաժնում



COURTalks-disCOURS տեսահոլովակներով տարբեր թեմաներ են ներկայացվում դատավորներին, փաստաբաններին և այլ իրավաբան մասնագետներին, ինչպես նաև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին:

Տեսահոլովակները տարբեր լեզուներով հասանելի են առցանց՝ Դատարանի [YouTube ալիքով](#), Դատարանի [կայքէջում](#) և [HELP հարթակում](#)՝ ելույթի և նախադեպային իրավունքի տարբեր նախադեպերի ցանկի հետ միասին:

11. Տեղեկատվական թերթիկներ

Հասանելի է www.echr.coe.int կայքէջում՝ Մամուլ → Տեղեկատվական թերթիկներ բաժնում

- Կարող է ամփոփել թե՛ նախադեպային իրավունքը, և թե՛ անավարտ գործերը
- Թեմաների օրինակներ՝
 - ✓ Երեխաներ և ծնողներ (Երեխաների իրավունքներ, Երեխայի միջազգային առևանգում, Ծնողական իրավունքներ, Անչափահասների պաշտպանություն, Վերարտադրողական իրավունքներ)
 - ✓ Քրեական ոլորտ (Ընտանեկան բռնություն, Ձերբակալում և փաստաբանի օժանդակություն, Գաղտնի կալանավայրեր, Ահաբեկչություն, Մարդկանց թրաֆիկինգ, Կանանց նկատմամբ բռնություն)
 - ✓ Տվյալներ (Նոր տեխնոլոգիաներ, Անձնական տվյալների պաշտպանություն, պատկերի պաշտպանության իրավունք)

- ✓ Խտրականություն (Գենդերային ինքնություն, Միասեռականություն՝ քրեական ասպեկտ, Ռասայական խտրականություն, Գնչուներ և ճամփորդողներ, Սեռական կողմնորոշման խնդիրներ)
- ✓ Եվրոպական միություն (Եվրոպական միության վերաբերյալ նախադեպային իրավունքը, «Դուբլին»-ի գործերը)
- ✓ Վտարում (Կոլեկտիվ վտարումներ, վտարումներ և հանձնումներ)
- ✓ Առողջություն (Կալանավորում և հոգեկան առողջություն, Շրջակա միջավայր, Էֆթանազիա և օժանդակվող ինքնասպանություն, Առողջություն, Հոգեկան առողջություն, Հաշմանդամություն ունեցող անձինք և ՄԻԵԿ, Բանտարկյալների առողջությանը վերաբերող իրավունքներ)
- ✓ Կյանք (Մահապատժի վերացում, Էֆթանազիա և օժանդակվող ինքնասպանություն, Կյանքի իրավունք)
- ✓ Կարծիքներ և տեղեկություններ (Համոզմունքների հիմնավորմամբ զինվորական ծառայության մերժում, Կրոնի ազատություն, Ատելության խոսք, Քաղաքական կուսակցություններ և ընկերակցություններ, Քվեարկելու բանտարկյալների իրավունք, Լրագրողական աղբյուրների պաշտպանություն, Կրոնական նշաններ և հագուստ, Ազատ ընտրության իրավունք, Արհմիությունների իրավունքներ)
- ✓ Բանտ (Կալանավորում և հոգեկան առողջություն, Կալանավորման պայմաններ և վերաբերմունք բանտարկյալների նկատմամբ, Էքստրադիցիա և ցմահ ազատազրկում, Հացադուլներ կալանավայրում, Ցմահ ազատազրկում, Կալանավորված միգրանտներ, Բանտարկյալների՝ քվեարկելու իրավունք, Բանտարկյալների՝ առողջությանը առնչվող իրավունքներ, Գաղտնի կալանավայրեր)
- ✓ Աշխատանք և բիզնես (Ընկերություններ՝ զոհեր կամ հանցագործներ, Ստրկություն, տաժանակիր աշխատանք և հարկադիր աշխատանք, Հարկում, Արհմիությունների իրավունքներ, Աշխատանքին առնչվող իրավունքներ)
- ✓ Այլ տեղեկատվական թերթիկներ (Զինված հակամարտություններ, Տարեց մարդիկ և ՄԻԵԿ, Արտատարածքային ընդդատություն, Միջանկյալ միջոցներ, Պիլոտային վճիռներ)

- Առկա են մոտավորապես վաթսուն տեղեկատվական թերթիկներ
- Ներկայումս թարգմանված են ութ լեզուներով

12. Երկրի պրոֆիլ

Առկա է www.echr.coe.int կայքէջում՝ Մամուլ → Երկրների պրոֆիլներ բաժնում

- Վիճակագրություն և կարևոր ավարտված կամ անավարտ գործեր՝ 47 անդամ պետությունների առնչությամբ

13. Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների և օրենքի գերակայության գլխավոր տնօրինության հրապարակումները

13.1. Մարդու իրավունքների ձեռնարկներ

Հասանելի է www.echr.coe.int կայքէջում՝ Հրապարակումներ → Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների և օրենքի գերակայության գլխավոր տնօրինության հրապարակումներ → [Մարդու իրավունքների ձեռնարկներ](#) բաժնում

- Գրված լինելով ոլորտային փորձագետների կողմից, յուրաքանչյուր ձեռնարկ վերաբերում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի և դրա Արձանագրությունների մեկ ոլորտի: Դրանք գրված են փաստաբանների և, հատկապես, դատավորների համար, բայց հասանելի են նաև բոլոր մյուս հետաքրքրված ընթերցողներին:
 - ✓ Կյանքի իրավունքը՝ ՄԻԵԿ-ի 2-րդ հոդվածի իրականացման ուղեցույց
 - ✓ Խոշտանգումների արգելում՝ ՄԻԵԿ-ի 3-րդ հոդվածի իրականացման ուղեցույց
 - ✓ Ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք՝ ՄԻԵԿ-ի 5-րդ հոդվածի իրականացման ուղեցույց
 - ✓ Արդար դատաքննության իրավունք՝ ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի իրականացման ուղեցույց
 - ✓ Անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունք՝ ՄԻԵԿ-ի 8-րդ հոդվածի իրականացման ուղեցույց
 - ✓ Մտքի, խղճի և կրոնի ազատություն՝ ՄԻԵԿ-ի 9-րդ հոդվածի իրականացման ուղեցույց
 - ✓ Արտահայտվելու ազատություն՝ ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածի իրականացման ուղեցույց
 - ✓ Սեփականության իրավունք՝ ՄԻԵԿ-ի 1-ին հոդվածի թիվ 1 Արձանագրության իրականացման ուղեցույց
 - ✓ Սեփականության իրավունքը Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի համաձայն. ՄԻԵԿ-ի և դրա Արձանագրությունների իրականացման ուղեցույց
 - ✓ Արդար դատաքննության իրավունքի պաշտպանությունը Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի համաձայն.
 - ✓ Անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքի պաշտպանությունը Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի համաձայն
 - ✓ Մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքի պաշտպանությունը Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի համաձայն
 - ✓ Ներգաղթյալների պաշտպանությունը Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի և Եվրոպական սոցիալական խարտիայի համաձայն
 - ✓ Դրական պարտավորությունները Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի համաձայն. ՄԻԵԿ-ի իրականացման ուղեցույց

14. Առաջարկներ առկա նյութերից արդյունավետ օգտվելու մասին

14.1. Փնտրեք կոնկրետ գործը

- ❖ HUDOC տվյալների բազա, Գործի վերնագրի կամ Դիմումի համարի օգտագործում

14.2. Փնտրեք գործերը ըստ հոդվածի, հիմնաբառի կամ թեմայի

- ❖ HUDOC տվյալների բազա
- ❖ Նախադեպային իրավունքի տեղեկագիր, դրա տարեկան ինդեքսը և իրավական ամփոփագրերը՝ ընդգրկված HUDOC տվյալների բազայում
- ❖ Նախադեպային իրավունքի ուղեցույցեր
- ❖ Նախադեպային իրավունքի հետազոտական հաշվետվություններ
- ❖ Եվրոպական իրավունքի ձեռնարկներ
- ❖ Տեղեկատվական թերթիկներ
- ❖ Մարդու իրավունքների ձեռնարկներ
- ❖ COURTalks-disCOURs

14.3. Իմացիր ամսեկան քննված ամենակարևոր գործերի մասին

- ❖ Նախադեպային իրավունքի տեղեկագիր

14.4. Իմացիր տարեկան քննված ամենակարևոր գործերի մասին

- ❖ Վճիռների և որոշումների հաշվետվություններ
- ❖ Դատարանի վերջին նախադեպային իրավունքի ակնարկ
- ❖ Նախադեպային իրավունքի տեղեկագրի տարեկան ինդեքս

14.5. Իմացիր ընդունելիության չափանիշները

- ❖ Ընդունելիության ուղեցույց